23171

331.11
Q-89

1930

05 JAN 2010

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ԿՆՔՎԱԾ ՓԱՅՏԱԳՈՐԾՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏՐԵՍՏԻ

## Մ Ի Ջ Ե Վ

331.11
Ա-89

Ե Ր Ե Վ Ա Ն 1930

25 FEB 2013
23171
331.11
Q-89

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 2061
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 3016 (բ)
ՏԻՐԱԺ 4000

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

1. Սույն հավաքական պայմանագիրը կնքվում է մի կողմից Փայաագործների Միության Կենտվարչության, վորը հետագայում կոչվում է «ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆ» նձինս Մ. ՄԱՐԻԿՅԱՆԻ և մյուս կողմից յաստանի Անտառարդյունաբերական Տրեստի, վորը հետագայում կոչվելու յե ՐԵՍՏ» հանձինս ընկ. Գ. ՌԱՄԱԶՅԱՆԻ:

2. Պայմանագիրը տարածվում է Տրեստի որ ձեռնարկներում և հիմնարկներում, պես ներկայումս աշխատող, նույնպես և յն պայմանագրի գործունեության ըն-ցքում նոր ընդունված բոլոր բանվորնե- և ծառայողների վրա:

Ծանոթություն.—Սույն պայմանագիրը չի տարածվում վարչական կազմին պատկանող անձանց վրա, վորոնք իրավունք ունեն բանվոր-ծառայող ընդունելու [illegible]:

3. Ս[illegible] ուժի մեջ է ած [illegible] հունվարի [illegible]-ից մինչև 1931 հունվարի [illegible]

Гос. Публ. Библиотека [illegible] ССРА
им. А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
12334.57

4. Պայմանագրի տեվողության ընթացքում, կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարելի յե փոփոխության յենթարկել առանձին կետերը և մասերը կամ մըտցնել նոր կետեր, ըստ վորում առաջարկ ստացող կողմը պարտավոր ե 7 որվա ընթացքում սկսել բանակցություն, հակառակ դեպքում առաջադրող կողմի արած առաջադրությունը կը համարվի ընդունված:

5. Յեթե մինչև սույն պայմանագրի գործողության ժամանակը լրանալը 15 օր առաջ կողմերից վորևե մեկը մյուս կողմին ցանկություն չի հայտնում վերանայել պայմանագիրը կամ հրաժարվել նրա յերկարացումից պայմանագիրը ամբողջությամբ գործադրության մեջ ե մնում § 1-ում հիշված ժամանակամիջոցի տեվողությամբ: Պայմանագրի վերանայման ժամանակ սույն պայմանագրով գոյություն ունեցող աշխատանքի պայմանները մինչև նոր պայմանագրի օրինական ուժի մեջ մտնելը չեն կարող փոխվել դեպի վատը:

6. Կոնֆլիկտները, վորոնք կապված են ապագայում աշխատանքի պայմանները սահմանելու հետ և իրենց լուծումը չեն ստա-



նում ԳԿՀ-ում, նմանապես և սույն պայմանագրի լրացումների ու մեկնաբանումների վերաբերյալ վեճերը, կամ սույն պայմանագրի հատկապես նախատեսնված դեպքում ծագած կոնֆլիկտները կարող են փոխադըրվել լուծում ստանալու համար հաշտարար ատյան կամ միջնորդ դատարան, ըստ վորում կողմերը իրավունք չունեն հրաժարվելու արբիտրաժից և յեթե նախագահի թեկնածության վերաբերյալ կողմերը կոնֆլիկտի ծագած որից 3 որվա ընթացքում համաձայնության չեն գալիս, այդ դեպքում կողմերը պարտավորվում են ընդունել Աշխժողկոմատի կողմից առաջադրված թեկնածությունը:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՅԵՎ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

7. Տրեստի վարչությունը պարտավորվում ե հավասար վորակի դեպքում առաջին հերթին ընդունել աշխատանքի Արհմիության անդամներին, վոչ միության անդամների աշխատանքի ընդունելն կատարվում ե վոչ այլ, քան ամեն մի առանձին դեպքում միության նախնական համաձայնությունը ստանալուց հետո, այդ դեպքում յերբ մի-

ության անդամների մեջ համապատասխան վորակի աշխատող բացակայում է:

Ծանոթություն 1.—Տրեստի վարչությունը պարտավորվում է բանվորների և ծառայողների ընդունելությունը կատարել բացառապես Աշխ. բորսայի միջոցով, բացառությամբ բարձր վորակի պատկանող աշխատակիցներից, կամ յեթե համապատասխան վորակի բացակայում է Բորսայում վորպիսի հանգամանքը պետք է ապացուցված լինի Աշխ. Բորսայի կողմից, վորոնք ընդունվում են ամեն մի դեպքում Արհմիության նախնական համաձայնությամբ:

Ծանոթ. 2.—Սույն պայմանագրին կցված է բարձր վորակի պաշտոնյաների ցուցակը, վորոնց համար միայն թույլատրվում է Տրեստի վարչության աշխատակիցներ վարձել Աշխ. Բորսայից դուրս:

8. Ամեն մի նոր բացվող տեղի մասին Տրեստի Վարչությունը պետք է անմիջապես հայտնի գործարկոմին, արհլիազորին ի գիտություն, տեղի ունեցող ընդունելության մասին գործարկոմին պետք է հայտնի



վոչ ուշ քան ընդունման մոմենտից յերեք որ հետո: Ընդունված ամեն մի բանվոր կամ ծառայողի վերաբերյալ գործարկոմին իրավունք է վերապահվում յերեք որվա ընթացքում ներկայացնի պատճառաբանված բացառք:

9. Շտատի կրճատման և մասսայական կրճատման ու հիմնարկության լիկվիդացիայի խնդիրը համաձայնեցվում է միության հետ, ձեռնարկության լիկվիդացիայի դեպքում, վարչությունը պարտավոր է իրազեկ դարձնել Միության Վարչության մեկ ամիս առաջ:

ա) Հաստիքի կրճատման ժամանակ հավասար վորակի պատկանող աշխատակիցներից առաջին հերթին հեռացվում են վոչ միության անդամները:

բ) հաստիքի կրճատման ժամանակ ընտանիքի միակ կերակրող հանդիսացող և միակ կանայք այլ հավասար պայմաններում ոգտվում են պաշտոններում մնալու առավելությունից:

գ) Աշխ. Որենս. 47 հոդ. «ը» կետով հեռացումը կարող է կատարվել վարձվածի ժամանակավոր աշխատունակությունը կոր-

ցրնելու հետեվանքով 3 ամիս անընդհատ աշխատանքի չգալուց հետո միայն, չհաշված ծննդաբերության պատճառով առաջացած արձակուրդը, Աշխ. Օրենս. 138 հոդ.

Հաստիքի կրճատման դեպքում լրացում Աշխ. Օրենս. 88 հոդ. և 47 հոդ. «ա» բ. գ. կետերի բաժանվում է :

դ) Աշխ. օրենս. 47-րդ հոդ. ա. բ. գ. և յե. կետերով հեռացվածին տրվում է հեռացման նպաստ, նրա յերկու շաբաթվա աշխատավարձի չափով, անկախ նրանից նախազգուշված է թե վոչ:

յե. Յեթե վճարումը չի կատարվում ժամանակին աշխատավորը մեխանիկորեն համարվում է ծառայության մեջ մինչև փաստացի վճարման օրը:

10. Միության վարչության գործարկոմի, ԳԿՀ-ի բանֆրակցիայի անդամները, ինչպես նաև արհլիազորները չեն կարող աշխատանքից հեռացվել առանց միության կենտվարչության համաձայնության և գիտության:

11. Սույն պայմանագրով նախատեսված բանվոր ծառայողների ընդունելության և հեռացման կարգը խախտելու համար պա-



տասխանատու յե Տրեստի կառավարիչը կամ նրա փոխարինողը:

12. Վորպես բրոնյա առաջին հերթին պետք է ընդունվեն բանվորների համապատասխան տարիքի զավակները Աշխ. Բորսայի միջոցով:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.—

13. Տրեստի վարչությունը պարտավորվում է աշխատակիցներին տալ արտահագուստ համաձայն սույն պայմանագրին կցված արտահագուստների ցուցակի: Արտահագուստը տրվում է բնականով և աշխատավորներին գործի ընդունելուց անմիջապես հետո:

Ծանոթություն.—1. Նախքան արտահագուստ բաշխելը տեսակն ու վորակը համաձայնեցվում է գործարկոմի հետ:
2. Յեթե տրված արտահագուստը ժամանակից առաջ է փչանում և գործածության համար անպետք է դառնում, Տրեստը պարտավոր է փչացած արտահագուստը փոխել նորով:
3. Արտահագուստի լվանալը և նորոգումը կատարվում է ի հաշիվ Տրեստի:
4. Տրեստը պարտավորվում է հատկա-

ցնել աշխատավորներին հատուկ պահարաններ հագուստ պահելու համար։

14. Տրեստի կենտրոնի և Շահալիի բաժանմունքի բանվորներին և ծառայողներին յուրաքանչյուրին օրացուցային տարվա համար տրվում է արձակուրդ տասն և չորս աշխատանքի օր, իսկ Այրումի, Սաղախլիի և Սեվքարի բաժ. բանվոր ծառայողներին յուրաքանչյուրին տարվա համար մեկ ամիս արձակուրդ։ Արձակուրդի հերթական կարգը մշակում է Տրեստը և ենթարկվում է ԳԿՀ-ի հաստատության։

Ծանոթություն.—1. Արձակուրդի օգտագործման նորմալ ժամանակամիջոցը սահմանվում է մայիսի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը։ 2. 1-ին գործարանի յուղարարներին արձակուրդ մեկ ամիս (բանվորական 24 օր)։

15. Աշակերտներին և անչափահաս բանվորներին արձակուրդ տրվում է ամառվա ամենաշոգ ամիսներին հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին։

16. Բրոնյա կարգով տեղավորված աշակերտների ուսուցման խնդիրը ապահովելու նպատակով Տրեստը պարտավորվում է կազ-



մակերպել աշակերտական խմբակ հմուտ վարպետի ղեկավարությամբ։

17. Այն վարպետները, վորոնք ամրացվում են աշակերտներին նրանց սովորեցնելու նպատակով իրենց այդ աշխատանքների համար օգտվում են հատուկ վարձատրությամբ։

Ծանոթություն.—Սույն կետը չի տարածվում ցեխ. վարպետների և նրանց օգնականների վրա։

18. 28–29 թ. համար հատկացված աշխ. պաշտպանության գումարների մնացորդը Տրեստը պարտավորվում է ծախսել Գնուտարնի ցեխի վենտիլյացիան անցկացնելու համար, վորպեսզի աշխատանքը պետք է ավարտվի մինչև սույն թվի փետրվարի 1-ը։

19. Բանվորների կամքից անկախ առաջացած պրոստոյների ժամերը, յեթե նրանք 5 րոպեյից պակաս չեն լինի պետք է հաշվառման յենթարկել Տրեստի կողմից։ Իսկ մեխանիկական ցեխում 20 րոպեյից վոչ պակաս։

20. Տրեստը պարտավորվում է հատկացնել ձրի վառելափայտ այն բանվորներին, վորոնք ըստ իրենց աշխատանքի բնույթի

հարկադրված են ապրել հիմնարկում, կամ ձեռնարկում (պահակներ, դռնապաններ, մաքրողներ):

21. Տրեստը պարտավորվում է տվյալ գործարանի բանվորների և ծառայողների ճաշի համար տրամադրել մեկ սենյակ, անհրաժեշտ ճաշասեղաններով և աթոռներով:

22. Տրեստը պարտավորվում է սույն բյուջետային տարում Տրեստի բանվոր ծառայողների համար Յերևանում կառուցել 60 սենյակից բաղկացած մի տուն: Հիշյալ տան կառուցումը պետք է սկսել 1930 թ. մարտից և ավարտել ու բնակելի դարձնել 1930 թ. . . . . . Այդ տան բնակարանները բաշխելը կատարվում է գործարկոմի համաձայնությամբ:

23. Աշակերտների ուսուցման շրջանը սահմանվում է յերեք տարի. աշակերտներին իրավունք է վերապահվում աշակերտական շրջանի ընթացքում 6 ամիսը մեկ անգամ իրենց վորակի բարձրացման մասին հարց հարուցել:

Ծանոթություն.—Աշակերտների վորակը պարզում է հատուկ եռյակը հանձնաժողովը փորձնական աշխատանքի միջոցով: Եռյակը հանձնաժողովի մեջ պետք է մտնեն Տրեստի, գործարկոմի և ԼԿՅԵՄ-ի ներկայացուցիչները:



24. Տրեստը պարտավորվում է բրիգադային աշակերտության համար հատկացնել առանձին տեղ և ամեն մի աշակերտի համար մեկական դարդահ յուր արհեստի վերաբերյալ բոլոր գործիքներով:

25. Աշխատանքի ժամերի ընթացքում տրվում է կես ժամ դադար, սնվելու համար:

Տրեստը պարտավորվում է ձեռնարկի, հիմնարկում ունենալ լվացարան, ոճառ, սրբիչ, աշխատանքի վայրերում ունենալ յեփած ջուր խմելու համար և թեյ:

26. Վորպես մասնագիտական սնունդ Տրեստը պարտավորվում է տալ որական կես լիտր կաթ ռաշպիլովոչնի ցեխում աշխատող բանվորներին, յեթե այդպիսիներում փոշի ծծող մեքենա չկա:

27. Տրեստը պարտավորվում է բանվորներին և աշակերտներին մինչև 35 ռուբ. ստացողներին տալ բաղնիքի տոմս, մինչև այդպիսինի կառուցումը:

28. Աշակերտները կարող են փոխադրվել բանվորական հետագա աշխատանքի, աշակերտական վեց շրջանը լրիվ անցկացնելուց հետո, պայմանագրով նախատեսված աշակերտական վեց գրուպները անցնելուց առաջ փոխադրումը արգելվում է։

29. Լոռու, Փամբակի գավառում գտնվող է Սեվքարի բաժանմունքի բանվոր-ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին Տրեստը պարտավորվում է յեղած բնակարանները հատկացնել և կարիք յեղած դեպքում այդպիսիները վերանորոգման յենթարկել- Վերանորոգումները պետք է կատարվեն մայիս ամսվա ընթացքում։

30. Գործարքային աշխատանք թույլատրվում է տալ միմիայն 5–6 գրուպով վարձատրվող աշակերտներին։

31. Տրեստը իր գործարանի, հիմնարկի կամ ձեռնարկի բանվոր-ծառայողների համար Յերևանի 1-ին կամ 2-րդ գործարանում պարտավորվում է կառուցել տաք ջրի դուշ, դուշի կառուցումը պետք է կատարվի մինչև սույն տնտեսական տարվա մարտ ամիսը։

32. Տրեստը պարտավորվում է 1930 թ.



ընթացքում գործարանի բանվորներից հինգ հոգու ուղարկել խորհրդային այլ հանրապետությունները ուսումնասիրելու փայտամշակման արդյունաբերության գանազան ճյուղերը։

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՅԵՎ ՆՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

33. Աշխատավարձը սահմանվում է բանվորական 8 կարգանոց տարիֆ ցանցի 1:3 հարաբերականով։ Աշակերտներին 6 կարգանոց 1:2½ հարաբերականով։ Գրասենյակային և տեխնիկական ծառայողներին 15 կարգանոց տարիֆ ցանցով 1:5 հարաբերականով։ Ադմինիստրատիվ տեխնիկական ծառայողներին 16 կարգանոց տարիֆ ցանցով 1:4 հարաբերականով։

Ծանոթություն.—Տարիֆային ցանցի ամսական, օրական և ժամային տախտակը կցվում է սույն պայմանագրին։

34. Աշխատավարձի մինիմումը սահմանվում է բանվորական ցանցի համար 1ռ. 25 կոպ. օրական, աշակերտների ցանցի համար, 80 կ. օրական, գրասենյակի և տեխ. ծառայողների համար 40 ռ. ամսական, ադմին. տեխ. ծառայողների համար 90 ռուբ. ամսական։

տվյալ ամսի 20-ին և 2-րդ նվագը հաջորդ ամսի 5-ին: Աշխատավարձը վճարում է աշխատանքի ժամերին:

36. Աշխատավորների ըստ տարիֆային կարգերի բաժանումը կատարվում է Տրեստի կողմից համաձայն Փայատագործների Միության Կենտկոմի տարիֆ տեղեկատուի:

Ծանոթություն.—1. Այն աշխատանքների գրուպները, վորոնք չեն նախատեսնված տարիֆ տեղեկատույով, սահմանվում են կողմերի համաձայնությամբ լրացուցիչ կերպով:

2. Տրեստին իրավունք է վերապահվում մշակել բոլոր բանվոր ծառայողների և աշխատողների բաշխումը ըստ տարիֆային կարգի, ղեկավարվելով 1928 թ. Փայատագործների միության տարիֆային տեղեկատույով և մտցնել ԳԿՀ-ում հաստատման, մինչև սույն թվի հունվարի 15-ը:

37. Տրեստը պարտավորվում է մշակել գործարանի գործարքով աշխատողների իրերի գնահատումները բոլոր կարգի աշխատողների համար, վորոնց աշխատանքը յենթարկվում է նորմիրովկայի, վորպեսզի ներ-



կայացվելու յե ԳԿՀ-ին հաստատելու, վոչ ուշ քան 1930 թ. փետրվարի 1-ը:

38. Տարիֆային կարգը, արտադրանքի նորմաներ և նորմաների գնահատումներ սահմանվում է պայմանագրի տեվողության ամբողջ ժամանակի համար և կարող են վերանայվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ արտադրողության տեխնիկական պայմանները փոփոխվելու դեպքում:

39. Տրեստը պարտավորվում է մեքենայական, հավաքական ցեխերում, ինչպես նաև սղոցարաններում կիրառել աշխատանքի գործարքային ձև:

40. Գործարքով աշխատող բանվորների գրուպի մեջ մտնում է նաև տոն և հանգստի որերի աշխատավարձը:

41. Տրեստը յուր գործարանի, հիմնարկի, ձեռնարկի գործարկոմի, արհլիազորի պահպանման և կուլտ. կրթական աշխատանքների համար պարտավորվում է վճարել արհմիության տեղական մարմիններին տոկոսներ տվյալ գործարանում, ձեռնարկում կամ հիմնարկում աշխատողներին վճարվող աշխատավորների ընդհանուր գումարի 3 %-ի



12334.57
Гос. Публ. Библиотека ՀՍԽՀ—ССРА им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

չափով, որից 2 %-ը գործարկումի պահպանման և մեկ տոկոս կուլտ. կրթական աշխատանքների համար: Վերոհիշյալ տոկոսները վճարվում են գործարկումին, արհկխագրին ամեն մի անգամ աշխատավարձ վճարելուց անմիջապես հետո:

42. Տրեստը պարտավորվում է տվյալ գործարանի բանվորների մեջ կուլտ. կրթական աշխատանք տանելու համար հատկացնել առանձին շենք յուր հարմարություններով, վառելիք, լուսավորությամբ:

43. Տրեստը պարտավորվում է հիմնարկ ձեռնարկներին կից գործարկումին իր գրասենյակի աշխատանքները տանելու համար հատկացնելու տեղ:

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

44. Բանվոր ծառայողները պարտավորվում են վերջ տալ աշխդիսցիպլինայի խախտման բոլոր տեսակի արտահայտություններին, աշխատանքի ուշ գալ, աշխատանքի ժամերից շուտ գնալ, արհեստական ընդմիջում կատարել, հարբած աշխատանքի գալ, աշխատանքի ժամերին աղմուկ բարձրացնել և խանգարել արտադրության նորմալ ընթացքը, աշխատանքի ժամերին անձ-



նական գործերով զբաղվել, կեղծ հիվանդանալ, ադմինիստրացիայի, ցեխավոր վարպետների կարգադրությունները չկատարել:

45. Պայմանավորված յերկու կողմերն էլ պարտավորվում են կատարել հետևյալ ցուցանիշները ստուգիչ թվերի աշխատանքային արտադրողականությունը . . . . և աշխատավարձը արդֆինպլանում նախատեսնված թվերի սահմաններում: Ղեկավարվելով դրանով, ինչպես հիմք կարգավորելու աշխատավարձ և տեխնիկական նորմիրովկան, միաժամանակ և այն դեպքում, յերբ սույն ստուգիչ թվերը կատարելու նպատակով անհրաժեշտ է վերանայել արտադրանքի նորման և գնահատումն: Այս դեպքում Հայանտտրեստը պարտավորվում է կիրառել նախատեսնված արդֆինպլանով տեխնիկա-արտադրական և բարեփոխման միջոցները:

46. Բանվորները պարտավորվում են իրենց վրա դրած պարտականությունները ճշտությամբ կատարել այնպես, որ գերազանցումով կենսագործել Տրեստի 1929/30 թ. ստուգիչ թվերը թե աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ, թե աշ-

խատանքի դիսցիպլինայի ամրացմամբ, թե արտադրանքի վորակի լավացմամբ և թե ինքնարժեքի իջեցման իմաստով:

Ծանոթություն. — Տրեստի 5-ամյա ծրագրի լրիվ՝ և գերազանցորեն կենսագործելու նպատակով բանվորները պարտավորվում ենք 1929/30 թ. տնտեսական տարում կատարել 1928/29 թ. արդֆինպլանի չ'կիրառված մասը:

47. Բանվոր ծառայողները պարտավորվում են գործարանում, հիմնարկում յեղած գույքի, մեքենաների, ոժանդակ նյութերի և այլն իրերի հետ վարվել խնամքով և այդպիսիները պահել մաքուր:

48. Տրեստը պարտավորվում է յուր հաշվին ըստ պահանջի սույն հավաքական պայմանագիրը տպագրել գրքույկների ձևով և բաժանել բանվորության մեջ:

49. Տրեստը պարտավորվում է սույն պայմանագիրը տպագրելուց նույնպես տպագրել տալ հայերեն լեզվով 29/30 թ. կանտրոլ թվերը:

Փայտագործների Արհմիության կենտվարչության Պատ՝ Քարտուղար՝

Մ. ՄԱՆՐԻԿՅԱՆ

Հայանտառտրեստի կառավարիչ՝

Գ. ՌԱՄԱԶՅԱՆ



# ԱՐՏԱՀԱԳՈՒՍՏԻ ՑՈՒՑԱԿ

## ՀՆՈՑԱՊԱՆ

1. Կաստյում խիտ կտորից — 1 տարի
2. Ձեռնոցներ կաշվից կամ բրեզենտից — " մինչև մաշվելը.
3. Ակնոցներ պաշտպանիչ — ըստ կարիքի
4. Կոշիկ — մեկ տարի.

## ՑՈՒՂԱՐԱՆՆԵՐ 2-ՐԴ ԳՈՐԾ

1. Կոմբինացիա թեթև կտորից — մեկ տարի

## ՑՈՒՂԱՐԱՆՆԵՐ 1-ԻՆ ԳՈՐԾ

1. Կոմբինացիա թեթև կտորից — մեկ տարի
2. Կոշիկ — մեկ տարի
3. Կրկնակոշիկ — յերկու ձմեռ
4. Ձեռնոցներ ռետինյա — ըստ կարիքի

## ՓԱԿԱՆԱԳՈՐԾՆԵՐ

1. Կոմբինացիա — մեկ տարվա
2. Ակնոցներ նախապատ — ըստ կարիքի
3. Ձեռնոցներ բրեզենտյա — ըստ կարիքի

## ԴԱՐԲԻՆ—ՄՐՃԱՀԱՏ

1. Կոմբինացիա — մեկ տարի
2. Ձեռնոցներ կաշվի կրագներով — մինչև մաշվելը.

3. Կաշվե գոգնոց կրծքակալով — մինչև մաշվելը
ծածկված — 3 ձմեռ
4. Ակնոցներ պաշտպ. գունավոր — ըստ կարիքի

## ՄԱՆՏՅՈՐՆԵՐ

1. Կոմբինեզոն — մեկ տարվա
2. Ռետինյա ձեռնոցներ — ըստ կարիքի

## ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ԲԱՆՎՈՐ-ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՐՏՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

1. Մայաանիկովի (փոձանակային; սղոցի վրա աշխատող բանվորների.
   ա) Ամառը բացօթյա կամ շենքում աշխատելիս
   բ) Ձմեռը բացօթյա աշխատելիս
   1 Կոմբինեզոն խիտ կտորից աբշլագներով—9 ամիս.
   2. Տելոգրեյկա բեղբուկավկա — 2 ձմեռ
   3. Վալենկաներ ներբանները կաշվով
   4. Ձեռնոցներ տաք — 1 ձմեռ.
2. Մեծ ցիրկուլի սղոցի վրա աշխատող բանվորների:
   1. Կոմբինեզոն խիտ կտորից աբշլագներով.



2. Ակնոցներ նախապաշտպանելու ըստ հնարավորության.
3. Փոքր ցիրկուլի սղոցի վրա աշխատող բանվորների.
   Նույնը.
4. Ցուգովալշչիկ
   Նույնը.
5. Ռեյամուսի բանվորներ
   Նույնը
6. Շիպորեզնի դազգյահի բանվորներին
   Նույնը
7. Մեծ և փոքր ժապավենային (լենտաչնի) սղոցի բանվորներին.
   Նույնը
8. Սվերլինո-դոլբեժնի (ծակող) դազգյահի բանվորներին:
   ա) Ձեռքով աշխատեցվող
   բ) Մեքենայացված
   Նույնը
9. Մեծ և փոքր Ֆրեզերնի դազգյահի բանվորներին
   Նույնը
10. Տոկարներին
   Նույնը

## ՀԱՎԱՔԱԿԱՆ ՑԵԽ

1· Փորագրիչներին
խալաթ 6 ամիս
2· Հյուսներին և ատաղձագործներին
Կոմբինացիա խիտ կտորից արշյաղնե-րով — 1 տարի
3· Ոլիֆշչիկներին
Կոմբինացիա խիտ կտորից արշյաղնե-րով — 1 տարի
4· Պոլիրովշչիկ-բայցովշչիկներին
1· Կոմբինացիա խիտ կտորից արշյաղ-ներով — 1 տարի·
2· Ձեռնոցներ ռեզինից ըստ կարիքի·

## ԳՆՈՒՏԱՐՆԻ ԿԱՀՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՐԱՆ

1· Աթոռների փոքրը կոլորացնող պադ-գյաճի վրա աշխատող բանվորներին
1· Կոմբինացիա խիտ կտորից արշյաղ-ներով — 1 տարի
2· Ակնոցներ նախապաշտպանողական ըստ կարիքի
2· Գնուտարներ
1· Կուրտկա — 1 տարի
2· Շալվար—1 տարի
3· Ցարգովշչիկներին



1· Կոմբինացիա խիտ կտորից արշյաղ-ներով — 1 տարի·
4· Ռաշպիլովշչիկին
1· Կոմբինացիա խիտ կտորից արշյաղ-ներով — 1 տարի·
5· Պալիրովշչիկին
1· Սպինկաներ—ոխղենի
Կոմբինացիա խիտ կտորից արշյաղ-ներով — 1 տարի
2· Վոաքեր-ցարգեր և այլն·
Կոմբինացիա խիտ կտորից արշյաղ-ներով 1 տարի·
կաշվե գոգնոց կրծքակալով·
6· Համաքողներ (արոլշչիկ)
1· Կոմբինացիա խիտ կտորից արշյաղ-ներով — 1 տարի
2· Փոկապ քեչայից կաշեպատ
7· Պատրաստի կարասիք մաքրող բանվոր-ներին
1· Կոմբինացիա խիտ կտորից արշյաղ-ներով — 1 տարի

## ՍՂՈՑԱՐԱՆՆԵՐ

1· Ցիրկուլյարնի սամոչնի սղոցի վրա աշ-խատողներ

1. Կոմբինացիա խիտ կտորից արշլագներով — 1 տարի
2. Ակնոցներ նախապաշտպանողական ըստ կարիքի.

ՁՄԵՌԸ

1. Վալենկաներով կաշվով ներբաններ կարած — 2 ձմեռ.
2. Ձեռնոցներ — 1 ձմեռ.
3. Տաք գլխարկ ականջներով — 3 ձմեռ
4. Տելոգրեյկա բեղրուկավկա — 2 ձմեռ

2. Սևագործ բանվորներ
1. Կոմբինացիա խիտ կտորից արշլագներով — 1 տարի
2. Կոշիկներ — 1 տարի.

ՁՄԵՌԸ

1. Տելոգրեյկա բեղրուկավկա — 2 ձմեռ
2. Տաք գլխարկ ականջներով — 2 ձմեռ
3. Ձեռնոցներ տաք.

3. Անտառ ընդունողներ, պատրաստողներ անտառում.
1. Երկարաճիտ կոշիկ — 2 տարի.
2. Պլաշչ — 2 տարի.



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Գրասեն. և տնտ. կազմ. | 1 | 1 | 166,50 | 6,66 | — |
| | 2 | 1,2 | 180,— | 7,20 | 1 — |
| | 3 | 1,4 | 198,— | 7,92 | — |
| | 4 | 1,6 | 216,— | 8,64 | — |
| | 5 | 1,8 | 234,— | 9,36 | — |
| | 6 | 2 | 256,50 | 10,26 | — |
| | 7 | 2,2 | 283,50 | 11,34 | — |
| | 8 | 2,5 | 315,— | 12,60 | — |
| | 9 | 2,8 | 360,— | 14,40 | — |
| | 10 | 3,1 | — | 1,25 | — |
| | 11 | 3,4 | — | 1,50 | — |
| | 12 | 3,7 | — | 1,88 | — |
| | 13 | 4,1 | — | 2,35 | — |
| | 14 | 4,5 | — | 2,63 | — |
| | 15 | 5,0 | — | 3,00 | — |
| Վարչա-տնտ. կազմ. | 1 | 1 | — | 3,38 | — |
| | 2 | 1,1 | — | 3,75 | — |
| | 3 | 1,2 | — | — 80 | — |
| | 4 | 1,3 | — | — 96 | — |
| | 5 | 1,4 | — | 1,02 | — |
| | 6 | 1,55 | — | 1,44 | — |
| | 7 | 1,7 | — | 1,76 | — |
| | 8 | 1,85 | — | 2,00 | — |
| | 9 | 2,0 | 40,— | 1,60 | — |

## ՁՄԵՌԸ

1. Կիսամուշտակ — 3 ձմեռ
2. Ձեռնոցներ տաք

4. Անտառ ընդունողներ յերկաթգծային կայարաններում

1. Պլաշչ ամառ.
2. Կիսամուշտակ ձմեռը.
3. Կոշիկներ.

## Ց Ո Ւ Ց Ա Կ

Բարձր վորակի պաշտոնների

1. Ճարտարապետներ.
2. Տեխնիկներ.
3. Գլխավոր հաշվապահ.
4. Գլխավոր հաշվապահի օգնական.
5. Տնտեսագետներ.
6. Անտառագետներ.

ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

509

ՀՀ Ազգային գրադարան
NL0201903